

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԷԼՖԻՔ ԶՈՆՐԱԲՅԱՆ

Արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, արտիստ, բանասիրական գիտությունների թեկնածու ԷԼՖԻՔ ԶՈՆՐԱԲՅԱՆԸ ծնվել է 1979 թ.-ի դեկտեմբերի 26-ին Վանաձորում:

Մինչև 1995 թ.-ը սովորել է Կիրովականի թիվ 15 միջն. դպրոցում, ապա ուսումը շարունակել Վանաձորի Ս. Աբովյանի անվան թիվ 1 ազգային վարժարանի անգլիական հոսքում:

1993-1995 թթ. ավարտել է ՀԹԳՄ Վանաձորի դրամատիկական ստուդիան, իսկ 1998-2000 թթ. դասավանդել նույն ստուդիայում:

1995 թ.-ից աշխատում է Հովհ. Աբելյանի անվ. պետթատրոնում: Որպես առաջատար արտիստ՝ խաղում է մի շարք գլխավոր և հիմնական դերեր:

2000 թ.-ին որպես ստեղծագործող (արձակագիր)՝ արժանացել է «Դարավերջի համաքաղաքային փառատոնների» դափնեկրի կոչմանը (Վանաձոր):

2005 թ.-ից դարձել է Հայաստանի թատերական գործիչների միության անդամ:

1997-2001 թթ. սովորել և ավարտել է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի անգլիական բաժինը:

2001-2003 թթ. ծառայել Հայաստանի ազգային բանակում:

2003թ.-ից մինչ այսօր, որպես անգլերենի, ապա «Դրամայի տեսության» և «Գեղարվեստական խոսք» առարկաների դասախոս, աշխատում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղում:

2005 թ.-ին ընտրվել է որպես ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի երիտասարդական թնի նախագահ:

2006 թ.-ին «ՀԱՅՍՏԱՆ-2020» գրական համահայկական մրցույթում ճանաչվել է հաղթողներից մեկը՝ ստանալով դրամական պարգև և տպագրվել նույնանուն գրքում:

2008 թ.-ին «Զարթոնք» երիտասարդական գրական մրցույթում (ք. Գյումրի) ևս դարձել է մրցանակակիր և տպագրվել նույնանուն հանդեսում:

2008 թ.-ին մասնակցել է «Վիլյամ Սարոյան. համաշխարհային գրականություն և ազգային ինքնություն» միջազգային գիտաժողովին՝ հանդես գալով «Վ. Սարոյանի կարճ պիեսները. «սարոյանականը» զեկուցմամբ: Նա հեղինակ է գրականագիտական հոդվածների, պիեսների, հեքիաթների, ինչպես նաև սատիրաների, որոնք տպագրվել են ավելի քան տասը անթոլոգիաներում, ավանախներում, ինչպես նաև հանրապետական գրական մամուլում՝ «Դրամատուրգիա», «Գրական թերթ», «Նարցիս», «Գարուն», «Գրեթերթ», «Երկունք», «Պլըր Պուրի» և այլն:

2009-ին Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոնում, իսկ 2010 թ.-ին՝ Շուշիում, 2013-ին՝ Գորիսում, 2015-ին՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, 2016-ին՝ Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետթատրոնում բեմադրվեց Է. Զոհրաբյանի «Ա՛խ, այդ Վիուկը» հեքիաթ-պիեսը:

Թարգմանել է Վ. Սարոյանի, Օ. Ուայլդի, Սենյուել Բեքթրի, Լիա Կարավիայի, Արամ Սարոյանի, Իրակլի Շամատավայի և այլ գրողների երկեր, որոնք տպագրվել են հանրապետական մամուլում և հանդեսներում:

Երիտասարդ դրամատուրգի ստեղծագործությունները տպագրվել են նաև ԱՄՆ-ում («Կռունկ» հանդես), Վրաստանում, Ռուսաստանում («Գործ Արար» հանդես) և Իրանում:

2011 թ.-ին «Թատերարվեստին մատուցած ծառայությունների համար» արժանացել է Հայաստանի թատերական գործիչների միավորման բարձր պարգևին՝ ոսկե մեդալի, ինչպես նաև ՎՊՄԻ-ի շնորհակալագրին՝ («ակնառու հաջողությունների համար»):

2012 թ.-ին պետական պատվերով տպագրվեց Վիլյամ Սարոյանի «Բան ունեմ ասելու» հինգ պիեսների գիրքը Էլֆիք Զոհրաբյանի թարգմանությամբ, ծանոթագրություններով և գրականագիտական հոդվածներով:

2012 թ.-ին նա դարձավ Հայաստանի գրողների միության անդամ:

2012 թ.-ին Հովհ. Աբելյանի անվան պետական թատրոնը բեմադրեց նրա՝ նոր մեկնաբանությամբ գրված «Բժիշկ Այբուլիս» պիեսը (ըստ Կ. Չուկովսկու համանուն հեքիաթի), որտեղ նրան տրվեց գլխավոր դերը:

2012 թ.-ին իր արձակի համար արժանացավ «Նարցիս» հանդեսի մրցանակին:

2013 թ.-ին պետական աջակցությամբ տպագրվեց նրա «Հոգեվիճակ 13» պատմվածքների և սատիրաների անդրանիկ գիրքը:

2013 թ.-ին Վանաձորի Ուսումնական թատրոնը բեմադրեց Է. Զոհրաբյանի «Մկստանի պատմությունը» հեքիաթ-պիեսը:

2014 թ.-ին «Հոգեվիճակ 13» գիրքն արժանացավ մրցանակի՝ ճանաչվելով լավագույնը «2013 թվականին «Արվեստի և մշակույթի ոլորտում երիտասարդ ստեղծագործողներին տրվող ամենամյա մրցույթի» «Գրականություն» անվանակարգում:

2014-ին նրա «Կատունների թագավորությունը» պիեսը բեմադրվեց Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոնում:

2015-ին դարձավ բանասիրական գիտությունների թեկնածու:

2015-ին ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղում բեմադրվեց որպես դիպլոմային աշխատանք «Մկստանի պատմությունը» ըստ Է. Զոհրաբյանի:

2015-ին մանկապատանեկան գրքի միջազգային կոմիտեի հայաստանյան ներկայացուցչության (IBBY Armenia) իրականացրած գրական մրցույթում նրա «Ամոթի գույնը» հեքիաթը ճանաչվեց հաղթող, տպագրվեցվեց նաև անգլերենով:

2015 թվականի նոյեմբերի 21-ին բեմադրվեց նրա «Թեթև տարեք» տրագիկոմեդիան:

2016-ին Վանաձորի Ուսումնական թատրոնը բեմադրեց Էլֆիք Զոհրաբյանի «Սմբակներ» արսուրդի դրաման:

2016-ին նրա «Հեքիաթները» «Գրական մրցանակաբաշխություն - 21-րդ դար» համահայկական մրցանակաբաշխության ժամանակ արժանացան մրցանակի:

2016-ին Մոսկվայի «Գավիթ» հայկական ստուդիան բեմադրեց «Մկստանի պատմությունը» հեքիաթ-պիեսը:

2017-2019 թթ. նշանակվեց Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոնի գրական մասի վարիչ:

2017-ին որպես դրամատուրգ արժանացավ («Հայ ժամանակակից դրամատուրգիա» խորագրով) «Հովհ. Աբելյանի անվան հարապետական թատերական փառատոնի» մրցանակին՝ Հ. Աբելյանի անվան պատվավոր հուշամեդալի և դիպլոմի:

2017-ին Yerevan Book Fest գրքի առաջին փառատոնի մրցանակ մանկապատանեկան անվանակարգում «Հեքիաթների» համար և հավաստագիր «դրամատուրգիա» անվանակարգում «Մե՞ր, թե՞ քուանշ» պիեսի համար:

2017-ին լույս տեսավ Է. Զոհրաբյանի «Բյուրեղապակե մարդը» հեքիաթների գիրքը:

2017-ին մասնակցել է Իվանա Չաբաքի «The power of the actor» դերասանի վարպետության դասին:

2018-ին մասնակցել է «Դրամատուրգ-բեմադրիչ համագործակցությանը» վերաբերող միջազգային վարպետության դասերին (Վ. Ռիժակով):

2018-ին Գերմանիայում մասնակցել է միջազգային վարպետության դասերին՝ ներկայացնելով Հայաստանը («Դրամայի և սցենարի տեխնիկա»):

2018-ին Թբիլիսիում մասնակցել է «Արդի դրամայի» վարպետության միջազգային դասերին՝ ներկայացնելով Հայաստանը:

2018 թվականին արժանացել է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի սենատորների և անսամբլեայի պատվոգրերի:

2018-ին Վանաձորի Հովհ. Աբելյանի անվ. թատրոնում բեմադրվեց Է. Ջոհրաբյանի մշակմամբ «Գեղեցկուհին և հրեշը» (ըստ Վիլյուվի):

2019-ին «Սմբակներ» աբսուրդի դրաման թարգմանվեց լեհերեն և ընդգրկվեց «Արդի հայ դրամատուրգի» անթոլոգիայում:

2019-ին Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոնում բեմադրվեց Է. Ջոհրաբյանի «Սմբակներ» աբսուրդի դրաման:

2019-ին Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոնում բեմադրվեց Է. Ջոհրաբյանի «Մե՞ք, թե՞ քուանջ» ռոմանտիկ կատակերգությունը:

2019 թվականի 2-րդ կեսից նշանակվեց Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն:

2019-ին Շեքսպիրյան միջազգային փառատոնի Fest Off հավելվածի ժյուրիի անդամ

2020 - «Տիկին Սիրանույշ» - բեմադրվել է Գորիսի պետական թատրոնում, ներկայացվել Արմինոն միջազգային փառատոնին

2021-ին Armmono-ի շրջանակում Ջոհրաբյանի «Մեք, թե՞ քուանջ» կատակերգության ընթերցում համագաղթյին թատրոնի դերասանների կողմից:

2021-ին արժանացել է ԿԳՄՍ նախարարության պատվոգրի

2021-ին արժանացել է Թատերական Լոռի 29-րդ միջազգային փառատոնի դիպլոմի

2021-ին արժանացել է ՀՀ Լոռու մարզպետի շնորհակալագրին ՀԹԳՄ ԼՍ ստուդիայի 50-ամյակի առթիվ

2021-ին եղել է Շեքսպիրյան միջազգային փառատոնի Fest Off –ի ժյուրիի անդամ

2022-ին ԵԹԿՊԻ-ում որպես դիպլոմային աշխատանք բեմադրվել է «Սմբակներ» աբսուրդի դրաման (ռեժ.՝ Լեոն Համբարձումյան):

2022-ին Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական թատրոնում բեմադրվեց Է. Ջոհրաբյանի «Տիկին Սիրանույշ» մոնոդրաման (ռեժ.՝ Լյուբով Սասկյան):

2022-ին Կապանի պետ. Դրամատիկական թատրոնում բեմադրվեց «Իմ Հրեշը» բեմականացումը ըստ դր Վիլյուվի «Գեղեցկուհին և Հրեշը» հեքիաթի (ռեժ.՝ Քրիստինե Սլոյան):

2022-ին Հանրային Ռադիոյում ռադիոթատրոնի համար ձայնագրվեց Վ. Սարոյանի «Բան ունեմ ասելու» պիեսը՝ Է. Ջոհրաբյանի թարգմանությամբ ու Ոստիկանի կերպարի ձայնավորմամբ

2022-ին Ջոհրաբյանի «Ամենակարևորը գրքերը» հեքիաթի հիման վրա նկարահանվեց անիմացիոն ֆիլմ (Tizyan production):

2022-ին Երևանում մասնակցել է **միջազգային** գիտաժողովի՝ «Արդի հայ դրաման», զեկուցել է «Արդի հայ դրամատուրգիայի ժանրային ուղղությունները (2010-2022 թթ.)»:

2022-ին Երևանում Շեքսպիրյան միջազգային փառատոնի Fest Off-ի ժյուրիի անդամ:

2023 թ. Արմինոն միջազգային փառատոնում պարգևատրվեց հուշամեդալով